

**<<Դիլիջան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ի պահպանության բաժնի աշխատակիցների կողմից բացահայտվել են ապօրինի ծառահատման նոր դեպքեր**

<<Դիլիջան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ի պահպանության բաժնի աշխատակիցների կողմից հայտնաբերվել և կազմվել է 6 անտառխախտման արձանագրություն՝ ապօրինի հատված 15 ծառի անտառից դուրս բերման համար, որից 044 անտառխախտման արձանագրություն կազմվել է 07.07.2015թ. <<Դիլիջան տեղամաս>> մասնաճյուղի 1-րդ պահաբաժնում՝ Հ. Սամվելի Մնացականյանի նկատմամբ՝ ապօրինի հատված 2 կանգուն ծառի համար: 045 անտառխախտման արձանագրություն կազմվել է 10.07.2015թ. <<Հաղարծին տեղամաս>> մասնաճյուղի 7-րդ պահաբաժնում՝ Ս. Պետրոսյանի նկատմամբ՝ ապօրինի հատված 3 կանգուն ծառի համար: 046 անտառխախտման արձանագրություն կազմվել է 16.07.2015թ. <<Շամախյան տեղամաս>> մասնաճյուղի 2-րդ պահաբաժնում՝ Ա. Մկրտչյանի նկատմամբ՝ ապօրինի հատված 2 կանգուն ծառի համար: 047 անտառխախտման արձանագրություն կազմվել է 17.07.2015 թ. <<Շամախյան տեղամաս>> մասնաճյուղի 10-րդ պահաբաժնում՝ Գառնիկ Մնացականյանի նկատմամբ՝ ապօրինի հատված 4 կանգուն ծառի համար: 048 անտառխախտման արձանագրություն կազմվել է 17.07.2015թ. <<Շամախյան տեղամաս>> մասնաճյուղի 10-րդ պահաբաժնում՝ Հմայակ Սամվելի Մնացականյանի նկատմամբ՝ ապօրինի հատված 1 կանգուն ծառի համար: 049 անտառխախտման արձանագրություն կազմվել է 18.07.2015թ.վականին <<Հաղարծին տեղամաս>> մասնաճյուղի 2-րդ պահաբաժնում՝ Ա. Թամրազյանի նկատմամբ՝ ապօրինի հատված 3 կանգուն ծառի համար: Նշված 6 անտառխախտման արձանագրությունները ուղարկվել է ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության Տավուշի տարածքային բաժին: Ապօրինի հատումների արդյունքում անտառին հասցված վնասի չափը կհաշվարկվի ՏԲՏ-ի կողմից:

Հավելենք նաև, որ 12.07.2015թ.-ին <<Դիլիջան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ի աշխատակից որսագետ՝ Ա.Սարգսյանի կողմից հերթական ստուգայցի ժամանակ <<Դիլիջան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ին պատկանող Աղստև գետի հարակից տարածքում հայտնաբերվել է 3 ցանցից պատրաստված էկրան կոչվող ձուկ որսալու սարք, իսկ 19.07.2015 թվականին <<Աղավնավանք տեղամաս>> մասնաճյուղի 5-րդ պահաբաժնի տարածքից հայտնաբերվել է 1 ցանց բռնակով, 2 մետր երկարությամբ բռնաալ, 2 ռեզինե անդրավարտիք և երկարաճիտ կոշիկ: Բոլոր հայտնաբերված իրերը Ա. Սարգսյանի կողմից ի պահ է հանձնվել են կազմակերպության պահեստ: